

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Ա.ՉԵԽՈՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 55 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՌԵՖԵՐԱՏ

Թեմա՝ Ռաֆայել Պատկանյան

<<Օրորոցի երգը>> բանաստեղծությունը

Կատարող՝ Ռ. Բարսեղյան

Ղեկավար՝ Ա. Նազարեթյան

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

(1830- 1892)

Պատկանյանի ստեղծագործության մասին արդարացի դատելու համար անհրաժեշտ է պատկերացումներ ունենալ այն ժողովրդի ճակատագրի մասին, որի մեջ ստեղծվել են և որին նվիրված են եղել նրա երկերը:

Յու. Վեսելովսկի

Կենսագրությունը:

Ռաֆայել Պատկանյանը /Գամառ - Քաթիպան ծնվել է ծնվել է 1830 թ. Նոր Նախիջևան քաղաքում:

Հայրը՝ Գաբրիել Պատկանյանը, ուներ դպրոց, որտեղ էլ նախնական կրթություն են ստանում Միքայել Նալբանդյանը և Ռաֆայել Պատկանյանը:

Ապագա գրողի ընդհանուր զարգացման և գրական ուսումնառության համար մեծ նշանակություն են ունենում Մոսկվայի Լազարյան ճեմարանում սովորելու տարիները /1843- 1849/:

Այստեղ էլ հափշտակությամբ ընթերցում է Եղիշեի, Խորենացու, Բուզանդի, Փարսեցու, Լերմոնտովի, Տուրգենևի, Գոգոլի, Մոլիերի, Շեքսպիրի, Շիլլերի ստեղծագործությունները:

Պատկանյանի գրական գործունեությունը սկսվում է 1850 թվականից, երբ տեղափոխվում է Թիֆլիս:

Այստեղ նա պաշտոնավարում է Ներսիսյան դպրոցում որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ:

1851 թվականին բանաստեղծը մեկնում է Դորպատ՝ տեղի համալսարանում սովորելու: Սակայն նյութական հնարավորությունները թույլ չեն տալիս նրան բարձրագույն ուսումնառություն ստանալու:

Այնուհետև վերադառնում է Մոսկվա և ուսանում բժշկական ֆակուլտետում:

Այստեղ էլ կազմակերպում է գրական խմբակ՝ Գամառ-Քաթիպա անունով: Այդ անունը կազմված էր իր և ընկերության մյուս երկու անդամների անվան և ազգանվան սկզբնատառերից:

1855 թվականին լույս է տեսնում այդ ընկերության առաջին գրքույկը:

Նրանց նշանաբանն էր՝ «Խոսի՛ր այնպես, ինչպես գրում ես և գրի՛ր այնպես, ինչպես խոսում ես»:

Հետագա գրքույկներում տպագրված բանաստեղծությունները հայտնի դարձրին բանաստեղծի անունը:

1860 թվականին հիմնում է տպարան: Այնուհետև որոշում է նվիրվել լեզվաբանությանը:

1862 թվականին նա հրատարակում է «Հյուսիս» շաբաթաթերթը, որին մասնակցում են բանաստեղծի հայրը և հորեղբայրը:

Հազիվ մեկ տարի էր լույս տեսել, որ ցարական կառավարությունը փակեց այն:

Նույն թվին «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրում գրեց «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը:

1867-ին կնոջ հետ վերադառնում է Նոր Նախիջևան: Այստեղ էլ հիմնում է արհեստագիտական դպրոց: Մի հանգամանք, որը պատիվ էր բերում նրան:

1879 թվականին ստեղծում է մանկապարտեզ:

Կյանքի վերջին տարիները բանաստեղծ անցկացրեց աղքատության և հիվանդության մեջ:

Ռաֆայել Պատկանյանը վախճանվեց 1892 թվականին:

Ստեղծագործությունները:

Պատկանյանի ստեղծագործությունները բաժանվում են երկու շրջանի:

Առաջին շրջանը՝ 50- 60 թթ.:

Երկրորդ շրջանը՝ 70- 80 թթ.:

Առաջին շրջանի բանաստեղծություններն ունեն բազմազան թեմատիկա:

ա/ազգային

բ/ սոցիալ – կենցաղային

զ/ եվրոպական բարձրի

դ/ պատմական

Այս բոլոր թեմաներով հանդես էր գալիս իբրև ռոմանտիկ :

Նրա հայրենասիրական մոտիվներով գործերը անհամեմատ ավելի նշանակություն ունեցան անցյալ հասարակական կյանքում և անհամեմատ ավելի ճանաչում ստացան:

Բանաստեղծը չէր տեսնում սոցիալական ճնշումը: Նա տեսնում էր միայն ազգային ճնշումը:

Շատ բնորոշ է, որ Պատկանյանը ընթերցողին հայրենասիրության և հայրենիքի ազատության համար անձնագոհության ոգով դաստիարակելու նպատակով դիմում է պատմության օրինակին:

<<Քաջ Վարդան Վարդան Մամիկոնյանի մահը>> պատմական պոեմում նա ստեղծագործության նյութ է դարձրել 451 թվականի ապստամբությունը:

Վարդանի կերպարը բանաստեղծի համար եղել է պոետիկական կերպար:

Պոեմի բոլոր հատվածները խոսում են այդ հերոսի հետ: Վարդանը բոլորից ավելի էպիկական, հերոսական նկարագրով է ներկայացված:

Մենախոսության մեջ հերոսը կոչ է անում սիրել հայրենին:

Նրա երգ - խոսքը ապստամբության կոչ էր <<Հիմի էլ լռենք ,եղբայրք, հիմի էլ>>վերնագրով:

Պատկանյանը խստորեն դատապարտում էր բուրժուական երիտասարդության բարոյական անկումն ու այլասերումը:

Այդ տեսակետից բնորոշ են նրա՝ <<Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ>> և <<Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ> երգիծական բանաստեղծությունները:

Նա ազգի վիճակի նկատմամբ անտարբեր գտնվողներին թողնում է իր անեծքը. << Հազար անեծք նոցա վերա, էրնեկ շան պես սատակին>>:

1856 թվականին բանաստեղծը գրեց <<Արաքսի արտասուքը>> բանաստեղծությունը:

Այն գրել է՝ օգտագործելով դիմառնության ձևը:

Նալբանդյանը գրել է .<< Ես տասնյակ անգամներ կարդացել եմ <<Արաքսի արտասուքը>> և միշտ հիացել եմ, որովհետև դորա մեջ լսում և զգում եմ հայ ազգի իղձը, որովհետև ճշգրիտ և գեղեցիկ խոսում է ազգի ցավերի մասին>>:

Բաֆֆին այն բնութագրել է որպես <<Հայ պոեզիայի թագուհի >>:

Արաքս գետը մեր ժողովրդի սիրելի և հարազատ խորհրդանիշներից է: Այն անվանում ենք մայր բառով :

Հին կտակարանում Արաքսը կոչվել է Գիհոն : Այն դրախտի 4 գետերից մեկն է:

Հր.Աճառյանը Արաքս բառը ստուգաբանում է խփել , խլել բայով :

Հին աշխարհի հեղինակները Արաքս անունը կապել են աղմկոտ լինելու հետ : Արաքսի վրա շատ կամուրջներ են եղել : Այն անվանել են կամուրջներ չհանդուրժող գետ:

Գետը նավարկելի չէ: Օգտագործվում է ոռոգման նպատակով:

Մայր Արաքսը վշտահար է:

Բանաստեղծը << քայլամուկ >> շրջում է մայր Արաքսի ափերով և նրա պղտոր ալիքների մեջ փնտրո՛ւմ հին դարերի հիշատակները : Դիմելով գետին հարցնում է.

-Արա՛քս, ինչու ձկանց հետ

Պար չես բռնում մանկական,

Դու դեռ ծովը չհասած

Սգավոր ես ինձ նըման:

Այդ հարցից վրդովվում է Արաքսը : Նա հիշում է ,որ եղել է թագուհի , երբ գոյություն է ունեցել հայոց պետականությունը : Ոչինչ չի մնացել վաղնջական ժամանակներից , քանի որ իր ջրերն են մտնում << ճպոտ աչքերով >> օտարները: նա օտար փեսա ունենալ չի ուզում :

Այրի ասելով ակնարկում է Հայաստանի ինքնուրույնությունը:

Երագում է այն պահը, երբ իր որդիները կհամախմբվեն , և այն ժամանակ միայն ինքը նորից շքեղորեն կգարդարվի :

Ոտանավորի ավարտը ծառացում է ցարական բռնապետության դեմ և միաժամանակ կոչ էր ցարական լուծը թոթափելու համար:

Քանի որ իմ գավակունք

Այսպես կու մընան պանդուխտ,-

Ինձ միշտ սըգավոր կըտեսնեք,

Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...:

Հիշողություն , տխրություն ,մոռացում, խորհուրդ- խրատ, խռովք, համակերպվածություն, անցյալի քաղցր հուշեր, ցավ, ավիստանք , օտարություն , նվիրվածություն, վիշտ, կորուստ, հայրենի բնության պարզև, ուխտ. ահա բառեր, որոնք մենք զգում ենք` ընթերցելով բանաստեղծությունը :

Գետի արտահայտած սուրբ ուխտը մեզ լավատեսություն արտահայտելու հնարավորություն է ներշնչում :

Այն ուղերձ է` նվիրված հայ ժողովրդի ներկային ու ապագային:

Պատկանյանի ստեղծագործությունները` չափածո , թե արձակ, հայ նոր գրականության պատմության բավական երկար ժամանակաշրջանի նշանավոր արտահայտություններից են;

<< Օրորոցի երգը>> բանաստեղծությունը

Դասի թեման` <<Օրորոցի երգը>>բանաստեղծությունը:

Դասի նպատակը`

Սովորողը պետք է`

- . արտահայտիչ կարդա և անգիր արտասանի բանաստեղծությունը,
- . նկարագրի և բնութագրի քնարական հերոսին,
- . ներկայացնի գեղարվեստական խոսքի արտահայտամիջոցները;
- . դատողությունըն անի և արժևորի ազատության գաղափարը:

Դասի ընթացքը`

Խթանում

Ուսուցիչը առաջարկում է աշակերտներին մի փոքր մանկանալ և վերհիշել իրենց առաջին օրորոցայինը:Նրանցից մի քանիսը ,ըստ ցանկության, ներկայացնում են:

Այնուհետև ուսուցիչը լսել է տալիս Ռ.Պատկանյանի ծոռնուհու կատարմամբ <<Օրորոցի երգը>> տեսաերիզը:

Այն ունի նաև դրվագներ արցախյան հերոսամարտից:

<<Մտագրոհ>> և <<Քառաբաժան>> մեթոդների օգնությամբ ուսուցիչը ստուգում է սովորողների նախնական զգացողությունը:

Այս փուլում ուսուցչուհին օգտվում է նաև «Հետազոտական» մեթոդից, որը նա նախապես հանձնարարել էր երկու աշակերտի: Նրանք գրատախտակի վրա ներկայացնում են **սոխակի, արեղաձագի, տատրակի, կաչաղակի, բազեի** նկարներով պաստառ:

Իմաստի ընկալում

Այս փուլում ուսուցիչը ստուգում է, թե երեխաները ինչ գիտելիք ունեն ներկայացված թռչունների մասին:

Պարզվում է, որ յուրաքանչյուր երգեցիկ թռչուն ինչ-որ բան է խորհրդանշում:

Նրանք այն համեմատեցին բնության ձայների հետ; Նշեցին, որ լավ ձայն ունեցող երգիչներին **սոխակ** են անվանում:

Այս բոլորից հետո ուսուցիչը արտահայտիչ կարդում է բանաստեղծությունը:

Ապա սովորողները աշխատում են գույզերով: Զույգերին տրվում է անհատական աշխատանք՝ գտնել անձանոթ բառերը, պատկերավորման միջոցները, հանգավորումը, յուրաքանչյուր քառատողում ներկայացված թռչունի մասին տեղեկություն և այլն:

Կշռադասում

Աշակերտներին հանձնարարվում է անհատապես մտածել և գրել.

1. Եթե բանաստեղծություն վերածեք կտավի, ապա ի՞նչ գույներ կգերակշռեն:
2. Ինչո՞ւ են օդաչուններին անվանում **բազե**:
3. Ո՞ր թռչունը ու՞մ հետ համեմատվեց:
4. Ո՞ր՞մ երգի տակ երեխան քնեց և ինչո՞ւ:

Աշակերտները կարդում են իրենց գրածները:

Հետևություն՝ բոլոր ժամանակներում էլ ազգին անհրաժեշտ են զինվորներ :

Նրանք անցկացնելու են նաև ներառարկայական և միջառարկայական կապ գրականությունից, կենսաբանությունից և պատմությունից:

Տնային աշխատանք

Բանաստեղծությունը սովորել անգիր: